ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 9. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակելի տարածության իրավունքի ապահովումը

1. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները բուժական, դաստիարակչական, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից, գտնվելու կամ բնակվելու, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու, հանրապետության զինված ուժերում ծառայելու կամ ազատազրկման վայրերում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահպանում են իրենց բնակելի տարածության սեփականության կամ բնակելի տարածության օգտագործման իրավունքը:

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք, որոնք բնակվում են ժամանակավոր օթևանում կամ բնակության համար չնախատեսված օբյեկտներում, չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով բնակելի տարածություն, կացարանով ապահովելու համար դիմելու ու այն տրամադրելու պահին նախորդող 3 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու բնակելի տարածություն:~~18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք չունեն սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն:~~

2. Բնակելի տարածություն չունեցող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակտարածությունը տրվում է արտահերթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից:

3.~~–~~Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց կացարանով ապահովելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Սոցիալական աջակցության մասին» օրենքով:~~Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~: